

**ՄՐՑՈՒՅԹ**

HPE 16-port WW Serial Console Server սարքավորումների ձեռք բերման

«Արմենիան Քարդ» ՓԲԸ-ն հայտարարում է HPE 16-port WW Serial Console Server սարքավորումների ձեռք բերելու բաց մրցույթ համաձայն կից Հավելված 1-ի:

Մրցույթին կարող են մասնակցել Հայաստանի Հանրապետության իրավաբանական անձ հանդիսացող կազմակերպությունները:

Մրցութային փաթեթները պարտադիր պետք է պարունակեն`

- Մրցույթի առարկայի գինը` ՀՀ դրամով, ներառյալ ԱԱՀ,
- վճարման պայմանները, մատակարարման ժամկետները, երաշխիքային սպասարկման պայմանները:

Մասնակից կազմակերպությունները պետք է ունենան արտադրողի կողմից տվյալ մատակարարումն իրականացնելու հավաստագրում ստանալու վերաբերյալ փաստաթղթեր, որոնք գործում են մրցույթի անցկացման և մատակարարման իրականացման ամբողջ ժամանակահատվածում (Manufacturer Authorization Form):

Սույն մրցույթը հայտարարողը իրավունք ունի մինչև առաջարկների ամփոփումը ցանկացած պահի դադարեցնել մրցույթի անցկացումը և հրաժարվել բոլոր ստացած հայտերից` առանց որևէ պարզաբանման և չկրելով որևէ պատասխանատվություն մասնակիցների առջև:

Մրցութային առաջարկները պետք է ներկայացվեն ք. Երևան, Մ.Խորենացու փողոց 15 շենք («Էլիտ Պլազա» բիզնես կենտրոնի շենք, 8-րդ հարկ) հասցեով, փակ ծրարով :

Մրցութային առաջարկների ներկայացման վերջնական ժամկետն է 24.03.2023թ.-ը ներառյալ, մինչև ժամը 17.00-ն:

Հավելված 1

Count	Part number	Product	All count
1	Q1P52A	HPE 16-port WW Serial Console Server	2
2	Q1P65A	HPE RJ45-DB9 DCE Female 8-pack serial Adapter	4